# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**9 դեկտեմբերի 2019 թվականի N 119-Ա**

## ԽՈԼԵՐԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով և 19-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 2-ի N 1544-Ա հրամանի 5-րդ կետի 6-րդ ենթակետի դրույթները՝

**որոշում եմ.**

1. Հաստատել՝

1) ՀՀ Սյունիքի մարզում խոլերայի ներթափանցման, տարածման, կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումների հնգամյա մոբիլիզացիոն ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** / Հ.Պողոսյան

12/9/2019

X

ՆԱՐԵԿ ԲԱԲԱՅԱՆ

Подписано: BABAYAN NAREK 1505920434

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ • РЕСПУБЛИКА АРМЕНИЯ СЮНИКСКИЙ МАРЗПЕТАРАН • REPUBLIC OF ARMENIA SYUNIK MARZPETARAN

2019թ. դեկտեմբերի 9
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019 թվականի դեկտեմբերի 9 -ի
N 119-Ա որոշման

# ՄՈԲԻԼԻԶԱՑԻՈՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

## ԽՈԼԵՐԱՅԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՄԱՆ, ՏԱՐԱԾՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

### I. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| № | Միջոցառման անվանում | Իրականացման ժամկետ | Պատասխանատու կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Ձևավորել արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով՝ «Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» և հաստատել կազմը | Յուրաքանչյուր տարվա հունվար | Մարզպետարան,<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 2. | Ապահովել կասկածելի հիվանդի հայտնաբերման վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը առողջապահության ոլորտի պետական լիազոր մարմնին և նրա ենթակայության կառույցներին:<br><br>Կազմել և հաստատել մասնագետների ծանուցման սխեման (աշխատանքային և ոչ աշխատանքային ժամերին) խոլերայով հիվանդի (վիբրիոնակրի) հայտնաբերման վերաբերյալ | Կասկածելի հիվանդի հայտնաբերման կամ շրջակա միջավայրից խոլերայի վիբրիոնի անջատման դեպքում | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |

| | | | |
|---|---|---|---|
| 3. | Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում (այսուհետ՝ բժշկական կազմակերպություն) մշակել (լրամշակել) մոբիլիզացիոն պլաններ՝ համաձայն Առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 2-ի թիվ 1544 Ա հրամանի | Յուրաքանչյուր տարի | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 4. | Որոշել խոլերայով հիվանդի (վիբրիոնակրի) հայտնաբերման դեպքում վերակազմավորման համար նախատեսված բժշկական կազմակերպությունների, հիվանդանոցային և լաբորատոր բազայի (մանրէաբանական լաբորատորիաներ) պատրաստվածությունը՝ համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանի | Յուրաքանչյուր տարի | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 5. | Ապահովել և իրականացնել բժշկական կազմակերպությունների հակահամաճարակային պատրաստվածության գնահատում՝ համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանի | Յուրաքանչյուր տարի | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 6. | Իրականացնել ավտոտրանսպորտի մոտավոր հաշվարկ խոլերայի օջախում աշխատելու համար՝ համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանի | Յուրաքանչյուր տարի | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 7. | Որոշել խորհրդատուների խմբերը և ցանկը, նրանց իրազեկման և հավաքման կարգը | Յուրաքանչյուր տարի | մարզպետարան |
| 8. | Մշակել հակախոլերային համալիր միջոցառումների իրականացման մեջ ներգրավված ծառայությունների և | Յուրաքանչյուր տարի | մարզպետարանի |

| | | | |
|---|---|---|---|
| | ստորաբաժանումների փոխգործակցության կարգը | | ծառայությունների և ստորաբաժանումների ղեկավարներ |
| 9. | Մշակել հակահամաճարակային միջոցառումների պլան՝ խոլերայի օջախի տեղայնացման և վերացման համար՝ համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանի | Յուրաքանչյուր տարվա հունվար | մարզպետարանի<br><br>ծառայությունների և ստորաբաժանումների ղեկավարներ |

## II. ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

| № | Միջոցառման անվանում | Իրականացման ժամկետ | Պատասխանատու կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Իրականացնել բժշկական կազմակերպությունների ղեկավարների, փոխտնօրենների, վարակաբանների, թերապևտների և այլ մասնագետների, շտապ օգնության կայանների, պոլիկլինիկաների, դիահերձարանների և դատափորձաքննության բժիշկների, հոգեբույժների, վերականգնողական կենտրոնների և այլ հաստատությունների տեսական և գործնական ուսուցում՝ համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393 Ա հրամանի | Յուրաքանչյուր տարի | Մարզպետարաններ,<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 2. | Իրականացնել հյուրանոցների, հանգստյան տների աշխատակիցների վերապատրաստման տեսական և գործնական դասընթացներ | Յուրաքանչյուր տարի | մարզպետարան<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |

## III. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| № | Միջոցառման անվանում | Իրականացման ժամկետ | Պատասխանատու կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Ապահովել առողջապահության նախարարության կողմից իջեցված իրավական փաստաթղթերով (հրահանգներ, մեթոդական ուղեցույցներ, հրամաններ, շրջաբերական նամակներ) ամրագրված պահանջների լիարժեք տեղայնացումը և շարունակական գործադրումը | Մշտապես | մարզպետարաններ<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 2. | Ապահովել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 31-Ն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի հունվարի 11-ի թիվ 02-Ն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 258-Ն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 301-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի հունվարի 11-ի թիվ 02-Ն «Կենսաբանական, քիմիական և ճառագայթային գործոններով | Մշտապես | մարզպետարաններ<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |

| | | | |
|---|---|---|---|
| | պայմանավորված հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ ներկայացնող դեպք՝ երևույթների (վարակիչ հիվանդությունների, թունավորումների, ճառագայթային ախտահարումների դեպքեր) ստանդարտ բնորոշումները հաստատելու մասին» համատեղ հրամանի պահանջները՝ կազմակերպելով խոլերայի նկատմամբ միանվագ մանրէաբանական հետազոտության իրականացումը | | |
| 3. | Ապահովել խոլերայի նկատմամբ անապահով, էնդեմիկ երկրներից ժամանած անձանց բժշկական հսկողության իրականացումը | Անհրաժեշտության դեպքում | մարզպետարաններ<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 4. | Աջակցել հոգեբուժական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններ, տուն ինտերնատներ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ, ինչպես նաև շուրջօրյա կեցության այլ փակ տիպի կազմակերպություններ ընդունվող անձանց կղանքի միանվագ մանրէաբանական հետազոտության իրականացմանը խոլերայի և այլ աղիքային վարակների նկատմամբ | Տարեկան մեկ անգամ | մարզպետարանների առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետեր<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 5. | Խոլերայի կանխարգելման ուղղությամբ իրականացնել բնակչության առողջ ապրելակերպի քարոզչություն և բժշկահիգիենիկ գիտելիքների տարածում | Պարբերաբար | մարզպետարաններ<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |

## IV. ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| № | Միջոցառման անվանում | Իրականացման ժամկետ | Պատասխանատու կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Աջակցել «Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողովի աշխատանքներին՝ ուղղված խոլերայի օջախի տեղայնացմանն ու վերացմանը | Խոլերայով հիվանդի (վիբրիոնակրի) հայտնաբերման ժամանակ | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 2. | «Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողովի որոշմամբ որոշել/սահմանել խոլերայի օջախի կարգավիճակը (բերովի կամ տեղական դեպք) և դրա սահմանները՝ համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանի | Խոլերայով հիվանդի հայտնաբերման ժամանակ | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |
| 3. | Գործադրել հակահամաճարակային միջոցառումների պլանը՝ խոլերայի օջախը տեղայնացնելու և վերացնելու համար՝ համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանի | Խոլերայով հիվանդի հայտնաբերման ժամանակ | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ<br>«Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |
| 4. | Ապահովել տեղեկատվական աջակցության կազմակերպումը՝ խոլերայով հիվանդների (վիբրիոնակիրների) հայտնաբերման, խոլերայից մահվան դեպքերի և ձեռնարկված հակահամաճարակային միջոցառումների վերաբերյալ | Խոլերայով հիվանդի հայտնաբերման ժամանակ | «Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |
| 5. | Ապահովել «խոլերա» ախտորոշմամբ հիվանդի ստացիոնարից | Խոլերայով | Բժշկական կազմակերպությունների |

| | | | |
|---|---|---|---|
| | դուրս գրումը կլինիկական առողջացումից և հակաբիոտիկաթերապիայի ավարտից 24-36 ժամ հետո՝ կղանքի եռանվագ մանրէաբանական հետազոտությունների բացասական արդյունքի դեպքում (օրական 1 անգամ) | հիվանդի հայտնաբերման ժամանակ | ղեկավարներ |
| 6. | Ապահովել բժշկական հսկողության կազմակերպումը խոլերայով հիվանդների (վիբրիոնակիրների) կոնտակտավորների, ինչպես նաև տնային այցերի կազմակերպումն՝ աղիքային վարակներով հիվանդների ակտիվ հայտնաբերման նպատակով | Օջախի առկայության ժամանակահատվ ած | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ<br>«Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |
| 7. | Ապահովել խորհրդատուների ներգրավումը՝ հակախոլերային միջոցառումների իրականացմանը | Ըստ համաճարակային ցուցման | «Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |
| 8. | Ապահովել խոլերայով հիվանդների և վիբրիոնակիրների ակտիվ հայտնաբերումը և հոսպիտալացումը, ինչպես նաև կոնտակտավորների հայտնաբերումը և մեկուսացումը՝ համաձայն Առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 2-ի թիվ 1544-Ա և Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանների | Օջախի առկայության ժամանակահատվ ած | մարզպետարան<br>Բժշկական կազմակերպությունների ղեկավարներ<br>«Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Ապահովել անհայտ պատճառներից մահացածների դիահերձումը, նմուշառումը՝ խոլերայի նկատմամբ լաբորատոր հետազոտման նպատակով, պահպանելով տեղափոխման և հուղարկավորության կանոնները՝ համաձայն Առողջապահության նախարարի 2008 թվականի օգոստոսի 25-ի թիվ 15-Ն և առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանների | Ըստ համաճարակաբանական ցուցման | մարզպետարան<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ<br><br>«Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |
| 10. | Ապահովել խոլերային և ժամանակավոր հոսպիտալի, մեկուսարանի, մանրէաբանական լաբորատորիայի, դիահերձարանների պահպանությունը | Օջախի առկայության դեպքում | մարզպետարան<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ<br><br>«Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |
| 11. | Աջակցել ջրային օբյեկտների, խմելու ջրի և ջրամատակարարման, սննդի կազմակերպման, բնակավայրերի տարածքների, փողոցային առևտրի կազմակերպման, երկաթուղային կայարանների, մարդատար գնացքների, օդանավակայանների, ավտոկայանների, ինչպես նաև այդ վայրերում գտնվող հանրային սննդի օբյեկտների նկատմամբ հսկողության և / կամ անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը | Օջախի առկայության դեպքում | մարզպետարաններ<br><br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ<br><br>«Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային |

| | | | |
|---|---|---|---|
| | | | հանձնաժողով |
| 12. | Իրականացնել աշխատանքներ ուղղված բնակչության հիգիենիկ դաստիարակությանը և ուսուցմանը խոլերայի և այլ աղիքային վարակների կանխարգելման վերաբերյալ՝ օգտագործելով բոլոր հնարավոր ձևերը և մեթոդները | Օջախի առկայության դեպքում | մարզպետարան<br>բժշկական կազմակերպությունների ղեկավարներ<br>«Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |

## V. ԽՈԼԵՐԱՅԻ ՕՋԱԽԻ ՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

| № | Միջոցառման անվանում | Իրականացման ժամկետ | Պատասխանատու կատարողներ |
|---|---|---|---|
| 1. | Սահմանել դիսպանսեր հսկողություն խոլերայով հիվանդացածների, վիբրիոնակիրների նկատմամբ՝ համաձայն Առողջապահության նախարարի 2014 թվականի հուլիսի 2-ի թիվ 1544 Ա հրամանների | Խոլերայով հիվանդացածների, վիբրիոնակիրների լավացումից հետո՝ 3 ամսվա ընթացքում | Բժշկական կազմակերպությունների ղեկավարներ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | մարզպետարան |
| 2. | Մշակել համալիր միջոցառումներ ուղղված հնարավոր համաճարակաբանական բարդությունների առաջացման պատճառների վերացմանը՝ համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի թիվ 2393-Ա հրամանի | Օջախի վերացումից հետո | «Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով» արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողով |

09.12.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909690101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղեկալ՝ Գ.Թադևոսյան

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2019 թվականի դեկտեմբերի 9-ի
N որոշման
119-Ա

# Կ Ա Զ Մ

## Խոլերա հիվանդության կանխարգելման հարցերով արտակարգ սանիտարահամաճարակային հանձնաժողովի

1. ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ – հանձնաժողովի նախագահ
2. ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ (համաձայնությամբ)
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
5. ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ
6. ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի <<Սյունիք>> մասնաճյուղի տնօրեն (համաձայնությամբ)
7. <<Կապան>> խոշորացված համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
8. <<Գորիս >> խոշորացված համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
9. << Սիսիան >> խոշորացված համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
10. << Մեղրի >> խոշորացված համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
11. << Քաջարան >> խոշորացված համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
12. << Գորայք>> խոշորացված համայնքի ղեկավար (համաձայնությամբ)
13. << Տեղ>> խոշորացված համայնքի ղեկավար համաձայնությամբ)
14. << Տաթև>> խոշորացված համայնքի ղեկավար(համաձայնությամբ)
15. ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ (համաձայնությամբ)
16. <<Կապանի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն
17. <<Գորիսի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն
18. <<Սիսիանի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն
19. <<Մեղրու ՏԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն
20. <<Քաջարանի ԲԿ>> ՓԲԸ-ի տնօրեն
21. <<Տեղի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ -ի տնօրեն
22. <<Գորայքի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ -ի տնօրեն
23. <<Շինուհայրի ԱԱՊԿ >> ՊՈԱԿ -ի տնօրեն
24. ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի <<Սյունիք>> մասնաճյուղի էպիդեմիոլոգ (համաձայնությամբ)
25. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Սյունիքի մարզային կենտրոնի պետ (համաձայնությամբ)

26. <<Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր>> ՓԲԸ-ի տնօրեն (համաձայնությամբ)
27. Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի արևելյան կենտրոնի պետ (համաձայնությամբ)
28. ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ (քարտուղար):

09.12.2019

X

ԳՐԻԳՈՐ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Подписано: TADEVOSYAN GRIGOR 1909590101

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղարի տեղակալ Գ. Թադևոսյան